


ՎՃԱՐՆԱԿՆԵՐԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարինյ	համար
Տարեկան	12 ֆր
Վեցամսյ	6 "
Արժույթը	15 "
Վեցամսյ	8 "

Սակերիկայի	համար
Տարեկան	3 ֆր
Վեցամսյ	1.50 "

Մանուցումը տար ամս
 ինչ և տարիս համար 40 ս.
 ինչ վերջին և տարիս հա-
 մար 20 սակերիկ և և տե-
 ղին ամսին անկախներու
 համար 20 0/0 գեղջ կրոյ

Վաճառքի համար մի ֆե 10 սակերիկ



R. P. Kalmencarian, Mechitharistengasse
 (Autriche) W. 4.

Նամակ և դրամ դրիկ
 ներառումը և հաս-
 ցելի

Redaction na v'Estanky
 "Charjoun"
 Varna

Redaction du journal
 "Charjoun"
 Varna (Bulgarie)

Արժույթը համար
 մեկ
 X 20 ՍԱԿԵՐԻԿ X
 Պուշկարինյ համար
 մեկ
 X 15 ՍԱԿԵՐԻԿ X

Գրողները ևս չեն տրվել

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԴԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ԶՐ ՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵՔԻՆԻ ԵՒ ԵՈՒՆԻՍՏ ՕՐԵՐԸ

ՉՈՐԵՔԻՆԻ ԲԱՆԴԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԳԼՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵՐ

ՍԱՍՆՈՅ ՀԱՄԱՐ

Տարունը — Մամիկոնեան հրու-
 ալիք բնագաւառը — Հայաստանի
 պատմութեան մէջ կը գրուէ փա-
 աւոր և արժանաւայել տեղ մը .
 Ան ծնած է քաջեր, որոնք յա-
 ղող և յողթական կերպով պաշտ
 պանած են Հայութեան դաւար
 արտաքին ու ներքին թշնամի-
 ներու գէմ. Հոն ծնած և հայրե-
 նիքի զազափարով ներշնչուած
 են գէմքի ու նկարագիրներ .
 որոնք մեր պատմութեան մէջ կը
 գրուեն շատ փառաւոր և զեղե-
 ցիկ էջեր . Վարդանը, Վահանը,
 Սուշեղը, Տարունի զաւակներ են .
 Տարունի է նաև Մեսրոպ Մաշ-
 տոցը — հայկ. գայրութեան և կուլ-
 տուրայի նախահայրը .

Սասունը՝ Մուշի հարաւակողմ-
 եան այդ զեղեցիկ լեռնագաւա-
 ռը — կը կազմէ Տարունի սիրտը .
 Ամէն անգամ, երբ հայի գոյու-
 թեան վտանգ սպառնացած է
 հայկ. աշխարհի այդ սիրտը,
 վեհ ու հզարա, ինչպէս իր լեռ-
 ները, առաջին անգամ զգացած
 է զայն և վտանգը հեռացնելու
 համար չէ խնայած ան իր երի-
 տասարդ ու չիւան որդիներու
 արիւնը . Արարական արշաւանք-
 ներու առաջ ան թուժք մըն էր
 միշտ անընկճելի, միշտ սպառ-
 նացող .

Այժմ՝ երբ թրքական լիբը ու
 խայտառակ բէմիմը գծախային
 ծրագրով մը կուզէ արիւնաքամ
 ընել մեր հայրենիքը — քաջազ-
 նական Սասունը տասը կա, ճ տա-
 րիներու մէջ երկրորդ անգամ
 ըլլալով ցնցեց իր ժայռուտ գր-
 լուխը և զէնք բարձրացուց իր
 ազատ լեռները կաշկանդող բռն-
 նաւորներուն գէմ . — Սասունը
 այսօր կը գտնուի գիւցազնական
 մաքսաւումի մէջ շատ խոշոր ու մի
 մը հանգէպ . Բայց Սասունը ալ
 կերպ չէր կարող ընել . ինքնա-
 պաշտպանութիւնը սուրբ . նուի-
 րական և միեւնոյն ժամանակ բը
 նական իրաւունք մըն է . որու չը
 գիմը — այդ շատ լաւ գիտէ սա-

սունցին — վատութեան ու զա-
 սալութեան է և այլասեռման
 նշան .

Յայտնի փաստ է որ գծուարու-
 թիւներու առջեւ չընկճուի իր
 ազատութեան համար կոտորուող
 ժողովուրդը . կտրիճ ու անձնուէր
 Սասունցիները և անոնց օգնու-
 թեան հասնող մէկ գայիները լաւ
 գիտէին, որ թշնամին նենգ է
 և ուժեղ, բայց այնուամենայ-
 նիս անոնք ընդունեցին մարտի
 հրուէրը և Սասունի լեռները,
 ձորերը թեղացին տեղական շախ
 մախուներու և Ֆէդայական մօ-
 սիներու որոտումներով . Մինչև
 հիմա հասած ստոյգ տեղեկու-
 թիւները մեզ արդէն բերին
 շարք մը հայկ. յաղթանակներու
 մասին . տապանող լուրեր .

Մուշէն 18 ապրիլ թուականու
 կը գրուի «Իրօջակոյն» . «Ահաւա-
 սիկ շարք մըն է, որ յեղափո-
 խականները և Սասունցիք կուտի
 բռնուած են շատ շարաշար կեր-
 պով, արդէն երեք անգամ եղաւ,
 որ բաղխում կունենան . երեք
 անգամ մըն ալ մեր ինները յաղ-
 թող ելան .»

Յաղթութեան այս լուրը կը
 հաստատուի նոյնիսկ կուտի վայ-
 րէն և կուտողներէն եկող նամակ
 ներով, զորս իր վերջի թիով
 հրատարակած է «Իրօջակոյն» .

Հայկ. զէնքի այս յաղթութիւն
 ները, որոնք պարագաները երբ
 ի նկատի առնենք փոքրիկ բաներ
 չեն, գոտայնգած են հայ կու-
 տողները .

1894ի Սասունյ ապստամբու-
 թիւնը միջազգային կանանչ սե-
 զանի առջեւ բերաւ հայկ. հար-
 ցը և գիւտանագիտութիւնը գծեց
 մայիս 11ի ծրագիրը .

Հիմա, երբ հայկ. հարցը ան-
 տեսուելու վրայ էր, գիւցազնա-
 կան Սասունն է նորէն որ ուժեղ
 թափով անոր կուտայ կենդա-
 նութիւն և կը դարձնէ զայն օր-
 ւան խնդիր, որ կը կարօտի լուծ-
 ման . Եւրոպական պարլամենտ-
 ներու մէջ արդէն խոսուեցաւ Սա-
 սունի մասին . Պրանսայի արտա-
 քին գործոց նախարարը Պրէսան

սէի հարցապնդման առիթը Սուր-
 թանի կառավարութեան գէմ խօ-
 սեցաւ խիստ լեզուով և բրաւ կը-
 ծու ակնարկութիւններ . Մարկիզ
 Լէնոգաուն . Անգլիոյ արտաքին
 գործոց նախարարը, պատասխա-
 նելով հայ շատաստութեան մը
 իրեն ուղղած հեռագրին, կը
 յայտնէ, որ միջամտութեան հա-
 մար պէտք եղած հրահանգները
 եւ արդէն տուած է կ. Պոլսոյ իր
 դեսպանին և Հայաստանի իր
 հիւպատոսներուն . սանձահար-
 ուած է ուրեմն կարմիր Գազանը
 որոչ չափով . Պետութիւնները
 զատ-զատ և միահամուռ արդէն
 ըրած են գիմումներ . Եւրոպա-
 կան թերթերը վերջերս կը հա-
 ղորգեն, որ Պրանսա և Անգլիա
 բանակցութեան մէջ են հայկ.
 հարցի մասին . Նամաձայնութիւն
 մը կայացնելու համար . Ի հարկէ
 գիւտանագիտութեան մենք չենք
 սպասեր ամէն բան, բայց գի-
 ւանագիտական ներկայ զարթ-
 նումը ինչպատ մեր դատին կը
 փաստէ որ մենք մեր աւելի ու-
 ժեղ քայլերով պիտի կարենանք
 զայն աւելի առաջ մղել . աւելի
 վճռական դարձնել .

ԳԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆԻՐ ՖԻՆԱՆՍԻՍՏԻՆԸ ՄԷՋ

Ռուսական անմիտ բռնութիւնը
 տենչոտ եռանդով զէպի յեղափոխու-
 թիւն կը մղէ իրեն հպատակ բոլոր ժո-
 ղովորդները . Ուղարկուէր ու հան-
 դարտաբարոյ Ֆինլանդան երկար տա-
 րիներու համբերութենէ ետք այսօր
 արդէն բացարձակօրէն կիջնէ յեղ-
 կուտի ապարէզ, որովհետեւ ոռուսա-
 կան Բանսլավիզմի (համառոտականու-
 թեան) համայնակուլ և լիբը ամբար-
 տաւանութիւնը իրաւունք չձգեց, որ
 չը յափշտակէր խեղճ ժողովրդի ձեռ-
 քէն — ամէն ինչ պէտք էր ոռուսանալ .
 Ջնջուեցան պատմական իրաւունքներ
 և առանձնաշնորհումներ, արգիլուե-
 ցաւ ժողովներ գումարելու իրաւուն-
 քը, ճնշուեցան և ոռուսական քօնթ-
 րօքի տակ մտաւ մամուլը, զպրօքը,
 համալսարանը, երկաթուղիները,
 պօստը, Ռուսերէնը դարձաւ պաշտօ-
 նական լեզու, ոռուս չինովիկներով
 լեցուեցան երկրի բոլոր պաշտօնա-
 տուները .

Եւ այս բոլորէն վերջ պատերազմը

սկսելն ի վեր բռնութիւնները աւելի
 շատցան : Ֆինլանդական զօրքը զըր-
 կուեցաւ պատերազմի վայրը, թշնա-
 մական թնդանթներուն կեր դարձ-
 նելու համար, մինչդեռ կառավարու-
 թիւնը իրաւունք չունէր Ֆինլանդայի
 սահմանէն դուրս հանել ֆին զօրքը .

Ազգային դրամը յափշտակուեցաւ
 պատերազմի պէտքերուն համար պա-
 հանջուեցաւ Ֆինլանդացիներէն, որ
 հայրենաւիրական ցոյցեր ընեն ի նը-
 պաստ պատերազմին, լրտեսները ա-
 ւելի շատցան, հալածանքը կրկնա-
 պատուեցաւ, Այս բոլորը վերէն կա-
 ռավարողն էր Բօքրիկով, Ֆինլան-
 դայի ընդհ. կառավարիչը — կովկաս-
 եան Գալիցիին յար և նման տիպ մը .

Ալ չափը անցած էր, Ֆինլանդա-
 ցիները մինչև այս վերջի զէպերը
 կը մղէին ինքնապաշտպանութեան կը-
 ուր խաղաղ միջոցներով, բայց երբ
 Բօքրիկով իր բռնութեանց ու ոռու-
 սացման սիստէմին մէջ ամէն շափ ու
 սահման ոտնակոխ ըրաւ, այն ստեղծ
 Ֆինլանդացիները որոշեցին ընդգր-
 կել յեղ. ախիւ գործունէութեան ձե-
 ւը որուն առաջին զոհը եղաւ նոյն
 ինքը բռնաւորը .

Հելսինգֆորսի մէջ յունիս 16ին ժա-
 մը 11ին իր պաշտօնատուները մտած
 միջոցին էօյզէն Շաուսի անուն ե-
 րիտասարդ մը ընկուլէրի երկու հար-
 ուածներով վիզէն թեթեւ, իսկ փո-
 ղէն ձանր կերպով վիրաւորեց Բօք-
 րիկովը . որ նոյն վիշերը մեռաւ . Գն-
 դակը մտած էր ստամոքսին մէջ . Ա-
 հարեկիչը անմիջապէս զէնքը ուղղեց
 իր գէմ և դեռ չը ձերբակալուած
 ինքնասպան եղաւ . Շաուսի հին սե-
 նասօրի մը որդի է — համալսարանա-
 կան բարձր ուսում ստացած հայրե-
 նասէր երիտասարդ մը . Ան վարած է
 բարձր պաշտօններ .

Բօքրիկով 1898-ին նշանակուած
 էր Ֆինլանդայի ընդհ. կառավարիչ .
 Ռուսացման իր անխիղճ գործը յաջող
 կերպով առաջ առնելու համար նա
 1899-ին Ֆինլանդայի պետական քար-
 տուղար կարգեց տխրահնչակ Պէլլէն
 — այժմու ներքին գործերու նախա-
 րարը . որու խորհրդով 1903-ին ջընջ-
 ուեցաւ Ֆինլանդական սահմանադրու-
 թիւնը, և սահմանափակուեցաւ Սէ-
 նասի իրաւունքները և Բօքրիկով ան-
 ուանուեցաւ գիկդատօր միահեծան ի-
 րաւունքներով, զորս նա գործածեց
 գծաղղ ժողովուրդը ճնշելու . ստըր-
 կացնելու և հալածելու համար . . .
 բայց ինք ալ գտաւ իր արդար պա-
 տիմը, Թող սարսուտ նորէն Պէլլէ-
 ները, Գալիցիները, վրէժի Աստ-
 ուածները անողոք են և անխնայ . . .

Առաջ չօրհինիստ մամուլը կատարած է այս դէպքին վրայ և կուրորէն կառավարութեան կառավարիչ նոր նոր մեթոտներ պատարար Գիւրջանացիները ճնշելու համար. նոյնի վերջինս կառավարական օրգանը կը յայտարարէ. թէ ինկուր մարդ մըն է. բայց զազափարը ու սխտէմը չի մեղմիր, թէ երեսուսարդ Շառամանի գնդակները մահուան հարուածներ էին քին յեղափոխութեան համար. թէ հիմա, երբ կառավարութիւնը պէտք ունի իր բոլոր մասերու միարանութեան այս ձեռնարկը վայրենի կոպտութիւն մըն է. Այսքան յանդիմութիւն աչքէն լրբութեան ու ցինիկութեան վերջին աստիճանն է. Մենք այդ թիրթիր միայն կարող ենք բռնել, թէ բռնութեան զազափարը ու սխտէմը դաստպարտուած է յաւիտենական մահի ու անլոյս խաւարի...

ԿՐԵՏԷ

Թրքական լուծէն նոր ազատուած փոքրիկ կրէտէն ունի ներքին յուզումներ. Ը խանը կուզէ ճնշել կրէտական սահմանադրութիւնը. իսկ ազատասէր ժողովուրդը ի հայկէ այդ պէս բան խոյ չի կարող ապա. Վերջերս ժողովրդական պատգամաւորութիւն մը, կազմուած յեղափոխութեան ժամանակէն ի վեր հանրածանօթ գործիչներէ, ներկայացաւ իշխանին խնդրագիր մատուցանելու եւ եղած քմահաճոյքներու դէմ բողոքելու համար. Եւրոպական թերթերը հաղորդեցին իշխանին եւ պատգամաւորութեան միջեւ տեղի ունեցած խօսակցութիւնը, որու մէջ իշխանը—գոնէ այսպէս բտուեցաւ— ծանր ու կոպիտ կերպով վիրաւորանքներ հասուցած է պատգամաւորներուն:

Անոնց դահլիճ մտած պահուն իշխան Գէորգ Պապայանակիսին, պատգամաւորներուն գլխաւորին, ուղղած է հետեւեալ խօսքերը. «եկո՛ւ նայինք, դու միամիտ ծերունի եւ պատմէ, թէ ինչ գրուած է խնդիրագրերին մէջ. Պապայանակիսին պատարարին վրա թէ հայրենիքի գործերը լաւ գրութեան մէջ չեն եւ թէ մեռմիս — պատգամաւորութեան մէկ ճարտասան անդամը— բացատրութիւններ տայու պատրաստ է, իշխանը խօսքը կուզէ վերջինին, Այդ փուխը, որ ոչ հայրենասիրութիւնն ունի, ոչ խելք եւ ոչ ալ մեծերուն պատշաճ յարգանքը տալ գիտէ, ձեզ համոզեց եւ հոս բերաւ:»

Յուսիս.—Արքայական մեծութիւն, մենք հոս չենք եկած ծանր վիրաւորանքներու զո՛ճը դառնալու համար. եւ դուք մի մոռնաք, որ Պապայանակիս 4806ին յեղ. ժողովն ու ժամանակաւոր կառավարութեան նախագահն էր:

Իշխանը.—Լուս, յիմար, ամենուն պատճառը դուն եւս, Անոր վրայ պատգամաւորութիւնը կը պատրաստուի զահլիճէն դուրս ելլելի, բայց իշխանը զանոնք ետ կանչելով կանելցնէ.—«Ես ձեր հայրն եմ եւ հայր մը իր որդիները չի վիրաւորեր:—Ասկէ հտքը մուսիս կը կարդայ ինչդրագիրը, որու մէջ կը պահանջուի պատառախանալու կոտորումներն մը եւ սահմանադրութեան պահպանումը: Ընթերցու մէջ, ետքը նորէն կը խօսի իշխանը:

—Ի՞նչ կը նշանակէ ձեզ համար սահմանադրութիւն եւ օրէնսդրութիւն, ես գիտեմ, որ ատոնք ստանալով կընեմ բայց ես այդպէս կուզեմ ընել եւ ձեզից հնազանդութիւն կը պահանջեմ. ձեզ այս ազատ գրութեան հասցնողը ոչ ձեր կոթերն էին եւ ոչ ալ թուրք—յունական պատերազմը, ես ազատեցի ձեզ չնորհիւ Յարի հետ ունեցած իմ կապերուս: Եթէ ես չըլլայի դուք հիմա ազատուած չէիք ըլլար:

Պատկերով գրուած այս ձեռնարկը հրատարակուած է Պապայանակիսին կողմէ. Չայն կարգաւոր իշխան Գէորգ ազգու կերպով բողոքեց անոր դէմ եւ պաշտօնապէս հերքեց հրատարակելու ձեռքը. զայն շարժման թեւեւ կը զրգարանեցնէ արդիւնք անուանելով: Իր պաշտօնական հերքումին իշխանը կցած է նաեւ բացատրութիւն մը, որուն մէջ կրէտէի մարին միջոցաւ ազատագրուելուն մասին ան կը յայտարարէ. թէ պետութեան ներքին եւ արտաքին թիրեմ մարին հետ ունեցած յարաբերութիւնն էին, որ զինքը անօրհնորդեցին դէպի ներկայ պաշտօնը, պաշտօն մը որուն էն զլրաւոր նպատակն է կրէտէի ազգամութիւնը Յունաստանի հետ:

Ինչ որ ալ ըլլայ, փաստ է սակայն թէ կրէտէի մէջ դժգոհութիւնը ելլալով կը շատնայ. Արդէն իշխան Գէորգի կառավարութեան պայմանաժամը շուտով կը լրանայ եւ կը կարծուի թէ պետութիւններու նոր թեկնածուն է Մօնթէնէկիօսի գահաժառանգը:

ՆԱՐՏՐՈՒՄԱՆ ԿԱՐՃԱՐԱՆԸ

Այս անգամ քանի մը խօսք Եւրոպական պատուելիք քովի աղււռն. Պր. Գեո Երեկ վարժարանական զըրասեղանները թողուցած ըլլալուով համոզուած էի որ անվորձ էք կեանքի մէջ, բայց չէի գիտեր որ ատասինճանի տղայ էք եղեր:

Մի ինչ որ անստորագիր նամակ հիմ բռնելով ելնել ամբողջ երիտասարդութեան մը հասցէին անիրանարգանքներ տեղադրուցելու հետ չէք շփուած և չէք ալ ճանչնար կատարեալ անազնուութիւնն է:

Հաւատացէք շատ արգահատելի եղաք, Հեռուէն բան մը կը կարծէի... մե՛ղք:

Եւ ի՞նչ ալ ազատ տեղ գտած էիք ձեր գրութիւնը հրատարակելու, Ձէի զբաղիր ատ ոչոտոտ գրութիւնով—որովհետեւ հրատարակող ատ փախարարէն հերքուած հետը կը բռնէ լուրը հասցողներուն—Եթէ ուղղակի իմ վրայ յարձակէիք, հոգ չէ թէ նորէն անիրաւ պիտի ըլլար ան:

Ամենէն մօտ ատեն ես քննադատած ըլլալով Եւրոպական պատուելիքին խամրոցը սարակոյս չի կայ, որ ինձի և իմ գաղափարակիցներու կուղղէք ձեր հայհոյանքները, որքան պարտք կ'ըզգամ քանի մը խօսքով ձեր տեղը ցուցնել:

Պէտք է գիտնաք, որ ձեր ակնարկած օրմարկը անբողոքատելիօրէն բարձր ու մաքուր է՝ գառնուկի մորթով երեւնալու զոգ փարի, եցի—պատուելիներէն և անոնց թմրկահարներէն, մտքերուն անգամ չեն անցներ մութին մէջ կծկալի, անստորագիր լրբուկ նամակներ խմբագրելու բռնի իրենց կազմակերպութիւնը խածնել տալ ատոր անոր:

Ես իբրեւ հայ զգացող անհատ, չէի կրնար բնականաբար լուս միայ կեղծութիւն մը առնել:

Եթէ Եւրոպական պատուելիքն իր նպատակը առի՛ր օրէն մէջտեղ դնէր անկեղծապէս և յայտնէր որ—ինք իր հացին և բողոքական փրփրակալութիւն համար իրենց հաս խաւարը, ես կը սեղծայի իմ ժամանակիս նոյնիսկ տող մը բան գրելու համար:

Բայց երբ բուն նպատակը ծալլած պարկը դրած է և հրատարակ կուզայ շուրջնող խօսքերով, մտաւորական բարոյական սերունդը պատրաստուելու կեզ խօսքերով միամիտ եր սրտու է վերը... անոնց ստաւար թիւը իմացնելու համար... այն ատեն ես, կամ ամէն հայ անհատ պարտաւոր է կարծել կիզծիք մերկացնել:

Ես կրեամ որ Եւրոպականներն բացած հաստատութիւնը վարժարան չէ, այլ խամրոց, ատոր համար ալ անթիւր ներկայացած ատեն քննադատած եմ ու պիտի քննադատեմ ասկէ ետքն ալ:

Եւ հիմա, ձեր խղճին կը հարցնեմ, Պ. Գայճեան, եթէ քիչ մը գոնէ կը հասկնաք մանկավարժութիւնը—Եւրոպական արտու էլին իբրեւ ուսուցիչ արժէք ունի՞ր.—Հազար անգամ ոչ իբրեւ բողոքական պատուելիք թերեւս արժէք ունենայ, որուն վրայ ատմանագրիս թեւեւ հասցողները թող խօսին... Եւրոպական պատուելիք իբրեւ ուսուցիչ Չի կ'ԱՅ:

Անցին ատ հաստատութեան էջ կը մնաք դուք. Պ. Գայճեան: Ըսէք ինչդրով, ի՞նչ խօսք մը մասին երբ արդէն զուք ինքնաբերաբար ամբողջ մտածելու կարողութիւնից, հասկացողութիւնից և մանաւաղ ազնուութի մեկից հասարակութեան առջի կըրիք ձեր գրութիւնով:

Փաստեցէք հիմա թէ՛ նրկու հիս ատ ատիճանը ունեցող ուսուցիչով վարժարան կը ըլլա՞յ:

Ես գեո չեմ խօսիր ամբողջ կարգ ու սարգին, մէթոտին, աւանդուած կրօնական դասերուն որակին ու քանակին վրայ, բոլորը քաղուած ձեր աշակերտներէն: Ես գեո չեմ խօսիր և հրատարակութեան չեմ յանձնել Եւրոպական պատուելիքն «անկեղծօրէն—Տնօրէն»... ստորագրութեան հրատարակած խեղճ ու կրակ յայտարարութիւնները, որոնք մէջ իր հայերէնի կարողութիւնովը կը փայլի... Ես չեմ ըսեր գեո որ, զուք ի կուղղակի կամ անուղղակի խօստոված էք հասցող մէկու մը թէ՛ վարժարանէն գո՛ճ չէք, թէ՛ ևս հացի խղճից կրօնապիլ ձեզ գողնել և անիրաւ յարձակումներ ընել ատոր անոր:

Ահա՛ ձեր «օր ըստ օրէ յառաջդմող» տաշակերտներու մտաւոր մակարակը բարձրագոյնը, օրերեց պարտականութեան գիտակից ուսուցչական մարմին ունեցող խամրոցին ներքն ու դուրսը:

Եւ ես ի՞նչպէս հայ ըլլալու, ի՞նչ տեսակ թղթակից ըլլալու եմ որ, ստաւէն կիզծիքները մերկացնելու համար շատը չէ, գոնէ քիչը չի գրեմ:

Եթէ կը կասկածիք որ, ձեր խամրոցը հայ մանաւոր վարժարանին մրցակից նկատելով է որ կը քննադատուի—եւ ծամմել ու գոծնիք ալ ատէ— չարաչար կը սխալիք:

Հայ մանաւոր վարժարանը, անանց երբէք հիմնուած ըլլալուն հացի համար, գերագոյնորէն զուլափարակալ հիմնարկութիւն անձնական ամենամեծ զոհողութիւններով առաջ կը տարուի միմիայն մեր պահանջներուն համաձայն սերունդ մը

պատրաստելու համար եւ զազափարի համար հիմնուած հաստատութիւնները չէ որ պիտի գիշանին աչալկերաներ մտարալու, այս կամ այն ծնողքին կոնսկր եւ ետը շոյիու, շեթալի վարժարանին զլրուս պատանած զժազողութեան օգտուելու կը հասկնա՞ք:

Եւ ատանց ատոնց ան ունի 100 աշակերտ: Եւ զոգը թող երկայ:

Այնմայ ստիպուեցայ երկարել, Անցնիմ խնդրոյ յի թեղող նամակներուն:

Առաջին առթիւ ատ նամակները մեզ մտաւորը համար մեր հակառակորդներու կողմէ սարկուած խաղ մը կարծեցի, որովհետեւ ատ կարգի նամակներ մէկէ աւելի անգամներ գրուած եւ նոյն իսկ հրատարակուած են ձեր գրութիւնը հրատարակող ատ ներառուելու ստպակով թիրթիր մէջ:

Բայց հասարակութեան մէջ պարտաւոր զոգը մը կուզայ բաւական լոյս սփռել ատ անստորագիր նամակներուն վրայ: Պատեմ մտիկ ըրէք:

Ասկէ մի կերպ շարաթ առաջ Եւրոպական պատուելիքն ժողովարանին մէջ քարոզ կուտայ, որ թմրիկ սլոյնը կը յարձակի յայտարարականներուն վրայ, բնելով թէ՛—Աստուծոյ պատիճն է որ ատու կառավարութեան կողմէ կը յափշտակուին և կեղեցիները, որ պիտի գոյ որ անստարանն ալ պիտի յափշտակուին լուսաւորականներուն ձեռքէն եւս յի՞ լուսաւորականներ հարուածել եւ թէ՛ անոնց միամիտներէն օգտուելու:

Ինչպէս կերպեայ հոն ներկայ գտնուող տղա բայց լուսաւորական կրօնին նախանձախնդիր մարդ մը, այս միջոցը մտածեր էր, իր խելով վրէժ լուծելու համար:

Աս բանին թրողութեան կը հաստատուի, որովհետեւ Եւրոպական պատուելիքն քանի մը անգամներ է ստապուրը կուտէ, Այն կերպ ատոր առաջ ալ ծնողք մը իր աղիկը հաներ է ձեր խամրոցէն, իսկ ես ականջովս լսած եմ պատուելիքն հետեւեալ խօսքերը—պիտի կոտորուի մակեղանացին ու հայը, որովհետեւ փրփրատուէն հեռացած եմ: Աս ժամանակին շեթափուսի մէջ ալ գրուեցաւ:

Ասկէ զատ նամակին ոճն ալ կըրօնական լսան մը կը հոտի, ինչպէս կը պատմեն կարգացողները: Գրուե՛րք վաղ պիտի անցնիս պատուելիքն «անկեղծօրէն» եւ ինքզինքս ժողովարանին մէջ պիտի ցուցնեմի պէ խօսքեր ալ կան եղեր հոն, հետեւաբար, Պ. Գայճեան, ատ բամպակէ գնդակներուն կուրծքը պարզել չարմեր, եթէ կուրծք տալ կուզէք դեպի Սասունի կողմը նայեցէք...:

Արդ, մարդ որքան սգէտ կամ որքան անազնիւ ու շարժաւոր ըլլալու է որ, այս ատիճան յայտնի լած մը չի հասկնայ կամ հասկցածին վարժարանական գոյն տայ...:

Պատուելիքն հային կուզայ ինքզինքը հստածուած ցոյց տալու, եւ սըզէտ մէկը փոստ է տուել անոր, պատուելիքն հայի կուզայ որ իր վարժարանը ոչքամ ընող գործիք մը գտնուի, եւ դուք պ. Գայճեան, գիտակցարար գործիք էք եղեր:

Եթէ գրտակցարար գրեցիք ատ աղտոտ յօդուած—ամօթ ձեզի, եթէ անգիտակցարար գրեցիք— սեղի...

Թղթակից

Յիրիպէ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Քուսրանցա 19 4 յունիս 2

Ուրմիս 11 մայիս 1904

Քաղաքին հայութիւնը 1903 տուաւ հայրենասիրութեան պարտաճանաչութեան համեստ օրինակ մը:

Մի քանի օր առաջ ինչպատեբերկրի կառուցողներուն ժողովրդական հանգանակութիւն մը բացուեցաւ, շուրջ 2,500 ֆրանքի հասած է անոր արդիւնքը: Հանգանակութիւնը գեա կը շարունակուի: Կը յուսանք, որ ան 3000 ֆրանքի կը բարձրանայ: Հանգանակութիւն մըն ու սկսած է արկնանց և օրինորդներու մէջ: Փոփոխի է և օրինակելի այն ամենուն եռանդը: Երեսն քաջան ջերմ համակցութիւն ցոյց տուին զէպի Ս. Կոյժը: Յանկարի է մեզ համար որ Ռուսներու ուրիշ քաղաքներու հայութիւնն ալ Գոնսթանթնիսի հայրենասիրական օրինակին հետեւի:

Որքան որ կուզեն Հասան չէֆըրի Գուրպեթ օղլուն և իրեն նըման մի քանի քաղաքացիներ թարական ու մտաւոր հիւանդներ Հ. Յ. Գ. Գլխուն լուսանքներ թափեն, հայ հասարակութիւնը այս կարգի ախրահոշակ մակարոծներուն համար խոր արհամարհանք մը միայն կարող է ունենալ և գիտէ գնահատել իր ցօր ի մարդկը:

Կարո

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

և ի

«ՄԵԱԿ»-Ի ԳՐԱՐԱՆՆԵՐՈՒԹԻՒՆ

Բ.

Մշակի ստորին ստի
Անրեւն Վիւննէ 1876

Կեանքի բոլոր պայմաններուն մէջ մարդկութիւնը միշտ զէպի զեղարեւտը բնական ձգտում ունեցած է: Էթիկ թղթով նախապարտմանը լրջանը, պատմական դարերու օրալուսին կը հանդիպէր վէտալական հին երգերուն, որոնք արեւտի առաջին բուն արտայայտութիւններն են, եւ որոնք յուսոյ ու արձախրքի խանդալից փոխադրեցութիւնները կը խորհրդանշանեն: Բնութեան յարգական տեսարանները, դարերու բուն ընդարումները, վերջապէս մարդկային ձեռնհասութեան վեր կարգուած զօրութիւնները հետզհետէ աստուածակերպ երևոյթներ կը զգենուն զհանգաղին մարդուն ահարկեալ մտքին մէջ: Այս երեւոյթներու անձնաւորեալ պատկերները ժամանակին հետ ապա միմիկներով զիջութեան անուամբ կը զիջուին: Այսպէս եղած է արուեստի անբարեկամ արտայայտութիւնը, որ իր ամբողջութեան մէջ, հասանական արտադրութեան զրոյժը կը կրէ, եւ որուն անհատական մասնաւոր նկարագիրը կը պակսի դեռ:

րագիրը կը պակսի դեռ:

Բայց արուեստը հետզհետէ իր գիտակցութիւնը կը ստանայ, ու կը ձգտի թափանչանալ հանդիսանալ, գիծերու, ձևերու, գոյներու կամ ձայներու համադրութեամբ, մարդկային հոգիին բոլոր յոյժերուն:

Արուեստի յատկապէս թիւերը սերտ կապ ունին իմաստասիրական հայեցողութեանց եւ ըմբռնութեան հետ: Նայելով որ գնահատան տարրերու մէջ մարդիկ իմաստասիրական ինչ տեսութիւններ ունեցած են, արուեստն ալ անոնց զրոյժը անխորտակելիօրէն պահած է: Եւ սակայն մարդկային քաղաքակրթութեան մէջ սկիզբէն ի վեր իրագործուած արուեստի բոլոր շարժումները կրնան ընդունուիլ երկու մեծ բաժանումներու մէջ: Իրապաշտութիւնն ու սոսկապաշտութիւնը (թէ՛ ալ իր իտէալիզմ), որոնք գնահատան շրջաններու մէջ տարբեր տարբեր հանգամանքներ ստանալով, մերթ րնապաշտութիւնն ու գրապաշտութիւնն կոչուած են, եւ մերթ միտքեականութիւն, ուսման թիւերը, անկապաշտութիւն (տէքստան) կամ սկիզբով:

Ան ինչ ինչպէս կը դասեն առաջին վարդապետութեան հետեւողները: Փեղարուեստը, կրնան անոնք, կեանքին հետ անմիջական կապ ունի: Ընդհանրապէս թիւերը մեզ կը գրաւեն, լեզու կը ստանան, նայելով թէ մեր ներքին, հոգեկան

կանութիւններով, Մի խօսքով այսպէս շարունակաբար պատահում է ամէն մի գիւղացու հետ: Սեղծ ժողովուրդը կողպտում, հարստահարում, շարժարում են, բայց վերջիններս չունեն ոչ մի պաշտպան և կառավարութեան պաշտօնեաները վրատակ լինելով, որ իրենց շարագործութիւններին օրինաւոր պատիժ ու պատաստան չէ լինելու, համարձակ օրը ցերեկով կողպտում, կեղեքում, ձեռնով շարժարում են գիւղացիներին: Հայերը այնքան վախեցիկ են պարտից դատարաններին, որ ոչ մի գանգաւ, ոչ մի ձայն հանել չեն կարողանում, հաստատ իմանալով, որ ուշագրութիւն դարձնող չէ լինելու, էլ ի զուր տեղն պէտք է կաշառքով լըցնեն պաշտօնեաների գրպանը: Գիւղացիները համոզուած են, որ եթէ գանգատեն առանց կաշառքի ազատուել չեն կարող և դատը ձգձգելու է անվերջ ժամանակով, զրկելով իրենց գործից, աշխատանքից, ինչ եղանակաւ որ գիւղացիներին հետ են վարուում, համարեա թէ նոյն ձևով էլ քաղաքացիներին հետ են վարուում:

Բոլոր ազգութիւնները ունեն այստեղ ներկայացուցիչներ, ունեն պաշտպաններ բացի հայերից: Ատրպատական ինքնակառավարումը, միայն պողի վճարը ժամանակին լաւ պահում է, իսկ ժողովուրդի գանգատները վերայ միջնու հիմա ոչ մի ուշագրութիւն չէ դարձնում: Եստ բան է լսել Ուրմիսի հայ ժողովուրդի մասին, բայց միշտ լսել է, վատահիշելով որ ոչինչ անել չէ կարող, ինչպէս թաւրիզում: Փարձերը ցոյց են տուել, որ պարսից թէ ժողովուրդը, թէ կառավարութեան պաշտօնեաները չափազանց վախեցում են օտարակառավարներից և այլ կերպ են վարուում նրանց հետ: Եթէ մի օր եւ է օտարակառավարները, երբ պարսկական տակի հետ վատ են վարուում,

ուշագրութիւն է դարձնում և պահանջում է, որ նորան արձակեն, իսկոյն ուշագրութիւն են դարձնում ոչ մի կուպէկ չառնելով:

Այստեղի օտարազգիները, ունին իրենց ժողովուրդի ներկայացուցիչներ (միւլաթ բաշիներ) և վերջիններս հանդիսանում են ժողովուրդի և գիւղացիների պաշտպանները: Մի զէպք պատահելուց այդ ներկայացուցիչներին են յայտնում և նրանք էլ ժողովուրդի կողմից խօսում են պարսից դատարաններում ու գործին էլ օրինաւոր ձեւ են տալիս: Հայերը գուրկ են այդ առաւելութիւնից, եթէ մըտածեն և իրենց միջից մի օտարակառավար ընտրեն, այսքան ներուժի ներքին չեն քաշի: Այնքան ի զուր փողերի, որ տարայ ընթացքով լցնում են պաշտօնեաների գրպանը, եթէ մի փոքրիկ մասը վրձարեն, իրիւս ոտակ միւլաթ բաշու կարող են յետոյ բաւական թանգիտ լինել: Պարսից կառավարութիւնը, այդ ընտրութեան զէմ, ոչ մի ատարակութիւն չէ կարող անել, Հայ ժողովուրդի մեծամասնութիւնը ցանկանում է ունենալ իրենց ներկայացուցիչը և այս պաշտօնի համար յարմար է համարում ընտրել մի ազգեցիկ մարդու: Մենք մեր կողմից կարող ենք մատնացոյց անել Յովհաննէս Գրիգորեան Ջանչեանց անունով մի ազգեցիկ պարսի վերայ, որ 10 տարիներէջ մի վեր ապրում է Ուրմիսում և լաւ տեղեակ է պարսից դատավարութեան և միշտ օգնել է իրեն զիմողներին: Դատարաններում նրան ճանաչում և յարգում են իրրեւ մի արդարադատ և համեստ մարդու: Մինչեւ այս միջոցին չը գիմեն հազիւ թէ այստեղի հայերը կարողանան բարեկեցիկ կեանք վարել:

Այս քանի օրերումս Ուրմիսին 30 վերստ մնացած, ճանապարհին պար-

է իր կեանքը լաւացնել, նա աշխատանքի է կարօտ, նա անբարոյականութեան մէջ է, նրան ի՞նչ որ, զուր են կարում էք բնութիւնը:

Այսպէս էր Արծրունիի հասկողութիւնը. անիկա միշտ ալ այդ ըմբռնումին մէջ մնաց, եւ չի կրցաւ ճանչնալ ճշմարիտ գեղարուեստը: Բացի ասկէ, անիկա կատաղի թշնամի մը հանդիսացաւ իսկալիստ գրականութեան, ու իր թշնամութիւնը այնքան չափազանցեց, ա՛յն աստիճան սաստկութեան հասցուց որ, վերջիվերջոյ ամենանեղ միակողմնի ըմբռնող մը եղաւ, գրեթէ չի հակցող մը գրականութեան: Բայց դժբաղդաբար գոնէ Ռուսահայ հասարակութեան մէջ միեւնոյն թիւր հասկողութեան կազմուելուն պատճառ եղաւ: Իրով ու իրմէ ետքը, ոտուահայ մեր աղբարիկները երբեք չի կրցան ըմբռնել ու արտայայտել ճշմարիտ գեղարուեստը, խորունկ, գունագեղ ու հզօրապէս իսկատիպ, որ մեր օրերուն կը ձգտի ամբողջ գրական աշխարհը յեղաշրջել, առաջուր կոխելով բոլոր պայմանադրական ստիպումները, նախընկալ սրբութիւնները, անձեռնմերձ նախապաշարմանը: Ընդհանրապէս պաշտպանները չափազանց են հակացան, նրանք որ քիչ թէ շատ բացուած էին, իսկ ժողովուրդը, նրան ի՞նչ որ զուր գեղեցիկ սարեր ու ձորեր էք նկարում: Նա ուրիշ հարկաւորութիւններ ունի, նա աղքատ է, նա կամենում

Ի.

(Շարունակելի)

սից պահպանները սպանեցին մի ուսանողական պարսկ ուղապանի։ Այստեղի հիւպատոսը պահանջում էր պարսից կառավարութիւնից 100 հազար ռուբլի սուգանք և պատճել կախաղանի միջոցաւ երկու շարագործներին։ Մարդասպաններին ձերբակալել են և ներկայումս գտնուում են Ռւրմիայում։ Այս քանի օրերուս գոհացում կը տան հիւպատոսի պահանջներին։

Երկու շարաքից ի վեր է Անգլիական թաւրիգի հիւպատոսն գտնուում է Ռւրմիայում մի գործի առիթով։

Երկու ամիս առաջ Սոյի և Սալմաստի ճանապարհների վրայ սպանեցին Ամերիկացի միսիոներ Լապանին իր ասորի ծառայի հետ միասին։

Մարդասպանը սխալմամբ է սպանել, կարծելով թէ զա Ռւրմիայ Ամերիկական միսիոյի բնակապետն է, որի հետ մարդասպանը վաղուց ի վեր խնամի էր։ Այդ սպանութիւնը ահագին շփոթութիւն առաջ բերեց պարսից և անգլիական զիւլումասիայի մէջ։ Սպաննողը մի սէյիտ է, որ ըստ պանթեիստիկ անմիջապէս յետոյ ազատ ման էր գալիս Ռւրմիայ փողոցներում, վստահ լինելով, որ ինքը սէյիտ է և ոչ ոք իրաւունք չունի պատճել, բայց շնորհիւ անգլիական հիւպատոսի բռնած ազդեցիկ միջոցներով, մարդասպանը, հիւպատոսի Ռւրմիայ գալուց յետոյ, անմիջապէս բռնեցին, և անցեալ օրն զրկեցին թաւրիգի։ Լուրեր են պտտուում թէ թաւրիգում պէտք է գլխատեն։ Ինչ է պահանջում հիւպատոսը առ այժմ գաղտնի է։ Այստեղի հոգեւորականութիւնը սաստիկ զոգուած է, բայց ձայն հանել չէ կարողանում։ Հիւպատոսին պաշտպանելու համար, սոյս քաղաքի օրերս թաւրիգից կը գան 60 անգլիական զինուորներ, զոցանից 4ը արգէն հասել են Ռւրմիա։ Կրիստոնեաները շատ են ուրախացել մարդասպանի բռնելուն համար։

Ինչով կը վերջանայ խնդիրը յայտնի չէ։

Պ. Օսկանան

Յարգոյ Խմբագիր
Շարժում Լրագրի

Կը խնդրեմ հետեւեալին անկիւն մը շնորհէք Ձեր պատ. թերթին մէջ։

Անցեալ օր տեղական թերթի մը մէջ «կուսակցամտութեան չարիքները» վերնագրով եւ Միհրան Տոնայեան ստորագրութեամբ ողորմելի բան մը կարդացի շ. Յ. Գաշնակցութեան գէլ հայտնայից։

Սա ատիկա զրոյ արարածը շատ լաւ կը ճանչնամ. Աթէնքի մէջ անխիղճ անուս մըն էր, որ հոն հասնող հայ ճամբորդները կողոպտելու համար կ'ենն անուն ուրիշ մարդու մը հետ ընկերութիւն կազմած՝ տեսակ տեսակ մեքենայութիւններով դրամ շորթելու կը ջանար անոնցմէ։

Այդ մարդը զիս ու ընկերս ալ Աթէնքի մէջ շորթելու ուղեց շոգեւաւի տումակներ ծախելով, Բայց ես արթնութեամբ իսկական գիտելով ստուգեցի, այլ զինքն ալ փառաւորապէս խայտառակիցի ընկերներուն հետ։ Այս մասին մանրամասն բացատրութիւններ ալ կուտամ ատենի մը ասոնի եթէ հարկ ըլլայ։

Հիմա, դրամաշորթութեան այդ

հերոսը հոս եկեր ու սզգասիրական հովեր առնել կուգէ. Կը հարցնեմ իրեն, անտէր ու հազաւական թրջւառ պանդուխտները կողոպտելու խիղճ չընող թշուառական մը կրնա՞յ միթէ յեղափոխութեան մասին անաշուտ դատաստան արձակել։

Ուստի հարպարակաւ կը զգուշացնեմ այդ Միհրան Տոնայեանէն այն բոլոր միամիտները, որոնք թերեւս վստահելով իր շարաքի անթանց հաւատ կընծային անոր կեղծած զգացումներուն։

Օհանես Դեմալկեան
Վառնա

ՀԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐ

Պոլսէն յունիս 7ին Վիէննա կը ֆեռագրեն հետեւեալը.

Բ. Դուրը յայտարարած է թէ հայկական կոտորածներու թիւը չափազանցուած է. Անգլիական, Պրուսական և Ռուսական ներկայացուցիչները քննութիւն պիտի կատարեն. Բ. Դուրը յայտարարած է նաեւ որ հայկ կանկոմիտէն յարաբերութեանց մէջ է մակեդոնական կոմիտէին հետ. Հայերուն գէլ ձեռք առնուած խնդրութիւններուն պատճառը իրենք և իրենց հրոսախմբերը եղած են. իսկ քիւրտերն ալ սովորութիւն ունին վրէժ լուծելու ատակէ ալ առաջացած է կոտորածը։

Վիէննայի ոմորէս պիւլսն Պոլսէն կ'իմանայ, որ ապրիլ 12 էն մինչեւ մայիս 16 Սասունի գաւառի մէջ սպաննուած են 3000 հայեր, միւս մասամբ կ'ընեն և Երեւանի. ոչնչացուած են 50 հայ գիւղեր. Մուշի մէջ քիւրտերը ոչնչացուցած են 50 հայ խանութներ. Մուշէն փախած են շորս հազար հայեր և անօթի են. Եթէ ֆրանսական հիւպատոսին միջամտութիւնը չըլլար, անոնք ալ պէտք է կոտորուէին։

Հայոց պատրիարք Օրմանեանը խստիւ բողոքած է։

Հոռոմի «Ատրիանոս» թատրոնին մէջ ինչպստտ հայերու և մակեդոնացիներու մեծ միմիկ մը տեղի ունեցեր է, ի թիւս ուրիշ ատենաբաններու խօսած են նաեւ երեսփոխաններ. Մայա և Տէլպալցա։ Խստութեամբ դատաւարներ են հայկական կոտորածները։

Հոն որոշուեր է պահանջել Պերլինի դաշնագրութեան գործադրումը Հայաստանի և Մակեդոնիոյ վերաբերմամբ։

Պ. Տ. Տ. Տ. Տ.
Ս. Չ. Դ.

Տեղեկանալով որ մէկ երկու մութ անձնաւորութիւններ, օգտուելով իրենց մէկ երկու դաշնակցական անունը կրող, բայց

բարոյականի վրայ առաձգական գաղափար ունեցող բարեկամներու հետ ունեցած յարաբերութիւններէն, դաշնակցականի գիմակ կզգենուն ու այս և այնտեղ հրահանգներ կը տեղադրեն, կը հրահանգենք Պայքանեան շրջանի թէ անհաս ընկերներուն և թէ մարմիններուն որ զգուշանուն ուէ յարաբերութիւն ունենալէ կապակցելու մարդոց հետ, շնորհաւոր յեղափոխական ու կազմակերպական գործերու վերաբերմամբ։

Այս առաջին ազգաբարութիւնէն վերջ՝ շղզուշացողներու և նոյն ընթացքը շարունակողներուն վերաբերմամբ Կ. կոմիտէս խստութեամբ պիտի գործադրէ շ. Յ. Գաշնակցութեան բարոյական ցենդի բոլոր պահանջները, որոնք կը գոհացուին միայն կազմակերպութեան մէջէն Գաշնակցական բարոյական սկզբունքները շրջաբերողներուն արարքստմովը։

Պայք. Կեդր. Կոմիտէ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՄԻԱ

Յունիս 4ին, ս.ա.ա.տ.տ. սն ժամը 11ին Երզնէի Շառուան անունով երիտասարդ ֆիլիւնտացի մը, ստորճանակի երկու հարուածներով, Հէլսինկֆորսի մէջ, մահացու կերպով վիրաւորեց երկրին գլխաւոր կառավարիչ Բոբրիկովը։

Շառուան, Բոբրիկովը սպանողը, մինչև անտիոյ Գերակոյտի նախկին անդամներէն մէկի զաւակն է և համալսարանական մը. Բոբրիկով մինչև անտիոյ կառավարիչ նշանակուեցաւ 1898ին անոր օրով մինչև անտիոյ զրկուեցաւ իր առանձնաշնորհումներէն և ինքնուրոյնութիւններէն. Բոբրիկով շատ մեծ լիազօրութիւններ ունէր և ուզածին պէս կը կտրէր, կը թափէր։

Բոբրիկովը սպանող Շառուան կրթական նոխարութեան մէջ պաշտօնեայ է եղած։

Բարիք հասած է ուսու ժէնէրալ Պիլակատէֆ որ Յարէն նա մակ մը տարած է նախագահ Լուպէի համար. Այդ նամակին մէջ Յարը հաղորդելով շինական ապստամբութեան մը վտանգաւորութեան մասին Լուպէն կը խնդրէ համապատասխան միջոցներ ձեռք առնուիլ շինական զինները պահպանելու համար։

Քրաքովի թերթիէն մին կ'իմանայ որ Վարշաւայի մէջ, Ռուս. Լեհաստանի գլխաւոր քաղաքը, հրդեհի մը առթիւ ժողովրդին և ոստիկանութեան միջեւ մեծ ընդհարում մը տեղի ունեցեր է, որ վիրաւորուեր են ոստիկանականքը։

ՌՈՒՄ—ՃԱՐՈՆԱԿԱՆ
Պ. Տ. Տ. Տ. Տ.

Յունիս 7ին Լեա.Ս.անկէն վ.ժ. սուն կը հեռագրեն թէ ճարտական զորքը պաշարի պակասութիւն կզգայ. ճարտնացիները շատ մը պաշարողական թնդանօթներ կը տեղադրեն Բորթ-Մրթուրի բարձրութիւններուն վրայ։

— «Տէլը» Նիւսի յունիս 7ին թօքթիօէն կը հեռագրեն թէ մէնէրալ Շիթուէլ երկու գունտ քոքով Բորթ-Մրթուրէն գորս ելով է բերթին շրջակաները քննելու համար, հրոսիս արեւմտեակողմէն, սակայն ճարտնական յառաջապահ զօրքէն ետ մղուեր է մեծ կորուստներ աւալով։

— Բեթերսպուրկէն յունիս 7ին կը հեռագրուի թէ ռուս. հեռագր. գլխաւոր գործակալութիւնը Ռուս. տէնէն իմացած է որ ճարտնական փոխադրիչ երկու նաւեր խորտակուեր են, որոնց հետ ոչնչացեր է նաեւ ճարտնական գունդ մը իրեն հրամանատարով։

— Երբեք յոյ գոյս զօրքով Շիթակելու մեծ ընդհարումն ունեցեր է ճարտնացիներուն հետ։ Այդ ընդհարման մասին հետեւեալ մանրամասնութիւններ կը հաղորդեն Բեթերսպուրկէն։

Մուկտէն հասեր են շատ մը վիրաւորեալ սպաններ, զինուորներ, որոնք կը պատճեն թէ, սալին օրը պատերազմողներու թիւը հաւասար էր. երկու կողմէն ալ կորուստ կար, բայց յոյ թու թիւը քուսններուն կողմէն էր Երկրորդ օրը տեղի ունեցեր է զլխաւոր ճակատամարտը, ճարտնացիները շատ մը օգնութիւն ստանալով, քուսները ստիպուեր են նահանջել։

— Պերլինի «Լոկալ-Ունցէիդէր» թերթին Բեթերսպուրկէն կը հաղորդեն հետեւեալը։

Հոս կը հաւաստագրեն որ Շիթակէլուպէրկի զօրքանակը 14 հազար վիրաւորեալ, սպաննուած, և շարքերէ դուրս ելած ունի ճարտնացիները սմբակոծեր են 200 թնդանօթներով և զարմանալի ճշգրութեամբ, որու պատճառով ուսները ինկեր են խոշոր հատուածներով. Ռուս զօրքի ձախիւր բոլորովին ոչնչացեր է, թնդանօթներ չունենալուն պատճառով. մէնէրալ Շիթակէլուպէլ վիրաւորուած է. ճարտնացիները կը շարունակեն յառաջ խաղալ։

— Յունիս 7ին Թօքթիօէն Լօնտօն կը հեռագրեն թէ վերջին օրերս Վլադիվոսթոքի ուսու տարմիւր ճարտնական 5 փոխադրիչ նաւեր խորտակուեր է։

— Ռուս կառավարութիւնը Պերլինի մէջ 250 միլ. մարքի նոր փոխառութիւն մը կ'ընեն։

ОТГОВОРНИКЪ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна